

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՄԱՍՈՒԿԱ ԲԱՒՏԱԶԵ. «ՍԱՀՄԱՆՎԱԾ ԲՈԼՈՐ ՀԱՐԿԵՐԸ ՊԵՏՔ Ե ԿՃԱՐԿԵՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ»



տասխանատվությամբ հայտարարում են, որ սահմանված բոլոր հարկերը պետք է վճարվեն պետական բյուջե»:

Ըստ վարչապետի, քննչական մարմինները համապատասխան գնահատական կտան ծայնագրությունների հետ կապված զարգացումներին եւս:

- Ինչ վերաբերում է Վրաստանում բիզնեսի եւ նրա շահերի պաշտպանությանը, ապա բոլորի համար պարզ է եւ դա հաստատում է մեր դիրքորոշումը միջազգային վարկանիշում: Սակայն այն, ինչի ակամատեսն ենք իհնա, կարծես ծառայում է նախընտրական շրջանում հասարակական կյանքում լարվածություն առաջացնելուն,- ասել է Մանուկա Բախտաձեն:

Մեկնաբանելով վերջին ժամանակներում սոցցանցերում գաղտնի ծայնագրությունների հրապարակման եւ այդ ֆոնի վրա հարկերի կապակցությամբ «Իբերիա» եւ «Օմեգա Գրուպ» ընկերությունների շուրջ ծավալված իրադարձությունները, Վրաստանի վարչապետ Մանուկա Բախտաձեն հայտարարեց. «Ամենայն պա-

րական շրջանում հասարակական կյանքում լարվածություն առաջացնելուն,- ասել է Մանուկա Բախտաձեն:

Հիշեցնենք, որ «Իբերիա» հեռուստաընկերության եւ «Օմեգա Գրուպի» շուրջ ծավալված իրադարձությունները կառավարությունը համարում է՝ որպես հարկերից ազատվելու միջոց:



ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԱՆԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԲԱՑԿԵՑ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ



Վրաստանի Արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին Ախալքալաքիում մասնակցեց հերթական 20-րդ արդարադատության տան բացման արարողությանը:

Նր՝ նախարար Արտակ Զեյնալյանի գլխավորությամբ: Պատվիրական կազմում էին Հայաստանի արտաքին գործերի փոխնախարար Ռուբեն Ռուբինյանը, արդարադատության փոխնախարար Վիգեն Քոչարյանը:

Արդարադատության տան բացմանը մասնակցեցին Վրաստանի փախստականների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգենկոն, հաշտեցման եւ քաղաքացիական իրավա- (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

Թեա Ծուլուկիանու անձնական հրավերով միջոցառմանը ներկա էր Հայաստանի արդարադատության նախարարության պատվիրակություն:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՊԵՏՔՅՈՒՋԵԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽԱԳԻԾԸ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Վրաստանի խորհրդարանը ձեռնամուխ եղավ երկրի կառավարության կողմից ներկայացված պետությունների 2019 թվականի նախագծի քննարկմանը:

Հոկտեմբերի 17-ին նախագիծը պաշտպանության արժանացավ խորհրդարանի ֆինանսաբյուջետային կոմիտեի կողմից: Նշենք, որ նախնական տարբերակով նախագ-

ծում բյուջեի եկամուտներն ընթացիկ տարվա համեմատ, ավելացվում են 170,6 միլիոն լարի- (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՃԵՊԱԶՐՈՒՅՑ

ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Հոկտեմբերի 16-ին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ձեպագրույցում հանդես եկավ առաջիկա նախագահական ընտրությունների, նախընտրական քարոզարշավի ընթացքի, ինչպես նաև՝ երկրի ներքին եւ արտաքին քաղաքական առանձին հարցերի շուրջ իր դիրքորոշման պարզաբանմամբ:

Իր հայտարարության սկզբում Վրաստանի նախագահը դիմեց զինված ուժերի ներկայացուցիչ-

ներին, նրանց շնորհակալություն հայտնեց ծառայության համար եւ նշեց, որ առաջիկա ընտրու-

թյուններին շատ հարցերի կարգավորումն անմիջականորեն կախ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՏՎԵՑ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հոկտեմբերի 16-ին ուղիղ եթերով հանդես եկավ ժողովրդին ուղղված ուղերձով, որի ժամանակ հայտնեց իր հրաժարականի մասին: Նրա խոսքով՝ հրաժարականի նպատակն էր ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխությունն ավարտին հասցնելը՝ արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու եւ ողջ իշխանությունը ժողովրդին վերադարձնելու միջոցով:



Նիկոլ Փաշինյանն իր ուղերձում, մասնավորապես, նշեց.

- Այս հրաժարականի նպատակը, սակայն վարչապետի պաշտոնից հեռանալը, այսինքն՝ ձեր առաջ ստանձնած պատասխանատվությունից փախչելը չէ, այլ ընդհակառակը՝ մեր միասին իրականացրած ոչ բռնի, թավշյա, ժո-

ղովրդական հեղափոխությունն ավարտին հասցնելը՝ արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու եւ ողջ իշխանությունը ժողովրդին վերադարձնելու միջոցով:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանն ընդունեց կառավարության հրաժարականը:

Կառավարության հրաժարականն ընդունելու մասին Հայաստանի նախագահի հրամանագրում ասվում է.

«Հիմք ընդունելով Սահմանադրության 130-րդ հոդվածը.

Ընդունել կառավարության հրաժարականը»:



ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ՝ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐՈՒՄ ԿՆՑՎԵՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ 25 ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ ՍՊԱՌԿԵԼ Ե



Հոկտեմբերի 16-ին լրացավ Վրաստանի նախագահական ընտրություններից թեկնածությունը հանելու ժամկետը:

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գրանցել է նախագահի 25 թեկնածուի, որոնցից 19-ն առաջադրվել են քաղաքական կուսակցությունների, 6-ը՝ նախաձեռնողական խմբերի կողմից: Նախքան օրենսդրությամբ սահմանված վերջնաժամկետը, ԿԸՀ-ը որել է դիմում չի ստացել նախագահի թեկնածուներից: Հետեւաբար, գրանցված բոլոր 25 թեկնածուները կնդգրկվեն ընտրական քվեաթերթիկներում:

դի ընտրյալը նախագահի պաշտոնը կզբաղեցնի վեց տարի, հինգի փոխարեն, ինչպես դա եղել է մինչ այժմ: «Վրացական երազանք-դեմոկրատական Վրաստան» կառավարող կուսակցությունը պաշտպանում է նախագահի անկախ թեկնածու Սալոմե Ջուրաբիշվիլին: Սոցիոլոգիական հետազոտությունների համաձայն, նրա գլխավոր մրցակիցներն են համարվում «Ուժը միասնության մեջ է» միավորման թեկնածու, «Միասնական ազգային շարժում» նախկին կառավարող կուսակցության անդամ Գրիգոլ Վաշաձեն եւ «Եվրոպական Վրաստան-շարժում հանուն ազատության» կուսակցությունից թեկնածու Դավիթ Բաքրաձեն:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 28-ին անցկացվելիք ընտրությունները կդառնան Վրաստանի նախագահի վերջին ուղղակի ընտրությունները: Այս անգամ ժողովր-

(Խորագրի շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՃԵՊԱԶՐՈՒՅՑ

ՆԱԽԱԳԱՐԻ ԴԻՄՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ված է նրանց դիրքորոշումից:

Իսկ ինչ վերաբերում է այդ հարցում իր անձնական դիրքորոշմանը, ապա Գիորգի Մարգվելաշվիլին նախընտրել է զուշավորություն դրսևորել իրեն փոխարինողի ընտրության հարցում: Նշելով, որ ինքը գիտակցաբար հրաժարվեց իր թեկնածության առաջադրումից, Գիորգի Մարգվելաշվիլին ասաց. «Ես կըվեարկեմ այն Վրաստանի օգտին, որը, ինչպես 5,10,15 դար առաջ, վճռական է իր որոշումներում պաշտպանելու հայրենիքը, ոչնչացնելու թշնամուն, որը նվաճել է մեր հայրենիքը, ապահովելու մեր քաղաքացիների պաշտպանվածությունը եւ այս երկրում ապրելու հպարտության զգացումը, որը կդառնա մշակույթի եւ մարդկության

հոգեւոր կյանքի օրրաններից մեկը»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:


Հանրությանն ուղղված իր խոսքում, Վրաստանի նախագահը երկրի վարչապետ Մամուկա Բախտաձեին կոչ արեց առաջիկա օրերին հրավիրել կառավարության նիստ, որտեղ նախագահի մասնակցությամբ կքննարկվեն պետական ինստիտուտների արդյունավետ գործունեությանը եւ քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը վերաբերող հարցեր. «Ելքը տեսնում եմ պետական կառույցների, Վրաստանի կառավարության հետ իրավիճակի ճիշտ գնահատման եւ համապատասխան միջոցներ ձեռնարկելու մեջ»,- նշեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, ի պատասխան Վրաստանի

նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, կառավարության նիստ հրավիրելու կոչի, հայտարարեց.

- Մենք կառավարության նիստն անցկացնում ենք ընդունված ժամանակացույցով եւ նորմալ ռեժիմով, բնականաբար, պատրաստ ենք խոսել ցանկացած խնդրի մասին: Ինչ վերաբերում է կառավարությունում քննարկվող հարցերին, ապա դա կարգավորում է համապատասխան օրենսդրական մարմինը եւ կառավարության ղեկավարությունը այդ մասին հայտարարություն կանի,- ընդգծեց վարչապետը:

Իր հերթին, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցների նախարար Մայա Ձեփոխշվիլին հայտարարել է, որ նախագահին իրավունք չունի հրավիրել կառավարության նիստ:



ԱՄՆ

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՌԱՎԵԼ «ԹՇՆԱՄԱԿԱՆ» ԴԱՇՆԱԿԻՑ

ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփին այն կարծիքին է, որ Վաշինգտոնի դաշնակիցներից ոչ մեկն այնքան թշնամաբար չի վերաբերվում Միացյալ Նահանգներին, որքան Եվրոպական միությունը: Այդ մասին ԱՄՆ-ի ղեկավարը հայտարարեց CBS հեռուստաալիքին տված հարցազրույցում:

«Ինչ ասել է դաշնակից: Մենք հիանալի հարաբերություններ ունենք շատերի հետ: Բայց ոչ ոք մեր նկատմամբ իրեն այնքան վատ չի պահում, որքան անում է Եվրոպական միությունը: Եվրամիությունն ստեղծվել է, որպեսզի օգտվի մեզանից առևտրի ոլորտում, հենց դա էլ նրանք արեցին»,- ասել է Թրամփը:

ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՐԴԻ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՑ

ԱՄՆ-ի բյուջեի պակասորդը 2018 ֆինանսական տարում աճել է 17 տոկոսով եւ հասել 779 միլիարդ դոլարի նշագծին, ասված է ֆինանսների նախարարության հաշվետվության մեջ:

Այսպիսով, բյուջեի պակասորդն ԱՄՆ-ի համախառն ներքին արդյունքի նկատմամբ աճել է մինչև 3,9 տոկոս եւ հասել 2012 թվականից ի վեր ռեկորդային ցուցանիշի: Հաշվետվության մեջ նշված է Միացյալ Նահանգների ներկայիս վարչակազմի տնտեսական քաղաքականության հաջողությունը երկրի հասարակ բնակիչների համար:

Այսպես, Թրամփի նախագահության սկզբից ԱՄՆ-ում ստեղծվել է չորս միլիոն աշխատատեղ, քաղաքացիների իրական աշխատավարձերն աճել են 1,4 տոկոսով, բացի դրանից նկատվում է գործազրկության ցածր մակարդակ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՊԱՅԹՅՈՒՆ ԵՎ ՀՐԱՉԳՈՒԹՅՈՒՆ ԿԵՐՉԻ ՔՈՆԵՋՈՒՄ

Հոկտեմբերի 17-ի ցերեկը Կերչի պոլիտեխնիկական թուղթի ուսանողը կրակ է բացել եւ պայթյուն իրականացրել ուսումնական հաստատությունում, ինչից հետո ինքնասպանություն գործել: Պատահարի հետեւանքով զոհվել է 20 մարդ, ներառյալ չարագործը: Զոհվածներից 15-ը ուսանողներ են, ինչը ուսումնական հաստատության աշխատակիցներ: Շուրջ 50 հոգի հոսպիտալացվել է, նրանցից 10-ը ծանր վիճակում են եւ գտնվում են վերականգնման բաժանմունքում:

Դրիմում հոկտեմբերի 18-ից եռօրյա սուգ է հայտարարված:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ՊԱՏՐԻԱՐԹՈՒԹՅԱՆ ՀԵՑ ԿԱՊԵՐԸ ԽՉՎԵԼ ԵՆ

Ռուսական Ուղղափառ եկեղեցու Սրբազան սինոդը որոշել է ամբողջովին դադարեցնել շփումը Կոստանդնուպոլսի պատրիարքարանի հետ: Այս մասին ասված է Մոսկվայի պատրիարքարանի ներքին եկեղեցական կապերի բաժնի ղեկավար միտրոպոլիտ Իլարիոն Վոլոկոլաժսկու հայտարարության մեջ:

Մետրոպոլիտը հույս է հայտնել, որ Կոստանդնուպոլիսը կփոխի վերաբերմունքը ուկրաինական եկեղեցուն ինքնավարություն տալու հարցում:

«Մենք հույս ունենք, որ ողջամտությունը կհաղթի: Բայց քանի դեռ այդ փոփոխությունը տեղի չի ունեցել, քանի դեռ Կոստանդնուպոլսի կողմից ընդունված այդ անօրինական որոշումները մնում են ուժի մեջ, մենք չենք կարող շփման մեջ լինել այդ եկեղեցու հետ, որն այսօր գտնվում է պառակտման մեջ»,- ասաց միտրոպոլիտ Իլարիոնը:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՊԵՏՐՅՈՒՋԵԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽԱԳԻԾԸ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ով եւ, վերջին հաշվով, կազմելու են 12 միլիարդ 611,6 միլիոն լարի:

Ինչպես նշեց կոմիտեի նախագահ Իրակլի Կովզանիձեն, օրինանախագծի համաձայն, հաջորդ տարի ծրագրված է 4,5 տոկոսի տնտեսական աճ, իսկ արժեզրկումը՝ 3 տոկոսի չափով: Ինչ վերաբերում է բյուջետային պակասորդին, ապա այն չի գերազանցելու 2,7 տոկոսը: Ինչպես նշեց կոմիտեի նախագահը, զգալի գումարներ են հատկացվելու առողջապահական եւ սոցիալական ոլորտներին, ինչպես նաեւ՝ ենթակառուցային նախագծերի իրականացմանն ու փոքր եւ

միջին գործարարության խրախուսմանը, ինչը, իր հերթին, կհանգեցնի նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Ինչպես նշված է պետբյուջեի նախնական տարբերակում, կրթության, մշակույթի եւ սպորտի բյուջեն հասցվելու է 1 միլիարդ 475 միլիոն լարիի: Պետբյուջեի համաձայն, կշարունակվի անվճար դասագրքերի հանձնումը աշակերտներին, ինչի համար հատկացվում է 18 միլիոն լարի: Երեխաներին տրանսպորտով ապահովելու հարցի կարգավորման համար, առանձնացվել է 22,5 միլիոն լարի, իսկ նոուբերքերով առաջին դասարանցիներին ապահովելու ծրագրի իրականացման համար ծախսվե-



լու է 20,120 միլիոն լարի:

Պետբյուջեի նախագծի համաձայն, հաջորդ տարի նախադպրոցական եւ ընդհանուր հանրակրթական կարիքների համար, հատկացվում է 7338 միլիոն լարի, իսկ ուսուցիչների մասնագիտական

զարգացման համար՝ 11755 միլիոն լարի: 168 միլիոն լարի պետբյուջեից հատկացվելու է բարձրագույն կրթության զարգացման համար, իսկ մասնագիտական կրթության համար նախատեսված է ծախսել 48,690 միլիոն լարի:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ՝ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԻԱԼՈՒՄ



Հանդիպմանը, որին մասնակցում էին Եվրամիության անդամ 28 երկրների եւ

կանը՝ 20 արդյունք» նախաձեռնության կատարման ընթացքը:

Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Ջալկալիանին մասնակցեց Լյուքսեմբուրգում անցկացված Արեւելյան գործընկերության մի-նիստերիալում, որն անցկացվեց Եվրամիության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի նախագահությամբ:

Արեւելյան գործընկերության ծրագրի մասնակից վեց երկրների արտաքին գործերի նախարարները, քննարկվեց Եվրամիության «Մինչեւ 2020 թվա-րանի» նախաձեռնության կատարման ընթացքը:

Մինիստերիալի շրջանակներում, Դավիթ Ջալկալիանին հանդիպում ունեցավ Ֆեդերիկա Մոգերինիի, Եվրամիության հարեւանության քաղաքականության եւ ընդլայնման եվրակոմիսար Յոհաննես Յանի, Իռլանդիայի, Ռումինիայի եւ Ավստրիայի ԱԳ նախարարների հետ:

ՊԱՏՄԱ - ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՉԱՆ

ՊԱՅՊԱՆԵՆՔ ԳՈՆԵ ԱՅՆ, ԻՆՉ ՄՆԱՑԵԼ Ե ՇԱՄՔՈՐԵՑՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՑ

Հոկտեմբերի 14-ին, Թբիլիսիի Շամքորեցոց կիսախոնարհ եկեղեցու մոտ թբիլիսցիներն անցկացրին հավաք, որոնք պահանջեցին պատմա-մշակութային նշանակալի կոթող ներկայացնող հուշարձանի պահպանումը:

Երբեմնի անձնաբարձր գմբեթով հավաքարյան Շամքորեցոց «Սուրբ Աստվածածին» կամ «Կարմիր Ավետարան» կոչվող կիսախոնարհ եկեղեցու միակ կանգուն մնացած պատի հարեւանությամբ 2016-ին մեկնարկած շինարարական աշխատանքները լուրջ վտանգ դարձան պատմամշակութային կոթողի մնացորդների համար:

Շամքորեցոց «Սուրբ Աստվածածին-Կարմիր Ավետարան»-ը 18-րդ դարի հուշարձան է, որը գտնվում է Թբիլիսիի Հավաքար թաղամասում, Փերիսցվալբա 21 հասցեում: 1989 թվականի երկրաշարժի հետեւանքով շինությունը մասամբ խոնարհվել է՝ լուրջ վնասվելով: Վիրահայոց թեմի տեղեկությանը, եկեղեցու վերանորոգումը մինչ օրս չի իրականացվել, ինչի պատճառով եկեղեցու՝ ամբողջական փլուզման իրական վտանգ

կա: 2007 թվականին եկեղեցուն տրվել է «Մշակութային ժառանգության անշարժ օբյեկտ» կարգավիճակ: Բացի դրանից, փլատակները գտնվում են Թբիլիսիի պատմական զարգացման պաշտպանության գոտու սահմաններում, ինչը, իրավաբանորեն, պաշտպանության լրացուցիչ երաշխիք է:



Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՅՆԵՐԸ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՓՆՅԱ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԼՐԿԵՑ ԵՐԿՈՒ ՊԱՅՎԱՆԱԿՈՎ


Հոկտեմբերի 18-ին, Փոթիի նավահանգստում տեղի ունեցավ ԱՄՆ-ի կողմից Վրաստանին՝ որպես նվեր տրված «Այլենդ» դասի երկու պահակամակի հանձնման հանդիսավոր արարողությունը:



Միջոցառմանը, որին ներկա էին Վրաստանի վարչապետ Մանուկա Բախտաձեն, ներքին գործերի նախարար Գիորգի Գախարիան, պաշտպանության նախարար Լեւան Իգորիան, պաշտոնական այլ անձինք, ԱՄՆ-ի դեսպանի պաշտոնակատար Էլիզաբեթ Ռուդը հայտարարեց, որ նոր նավերը «էլ ավելի կնպաստեն, որպեսզի Վրաստանը դառնա ՆԱՏՕ-ի հուսալի գործընկեր՝ Սեւ ծովում համատեղ ծովային գործադրություններ անցկացնելիս»: «ԱՄՆ-ի առափնյա պահպանության ծառայությունն ապահովել է վրացական երկու անձնակազմի ուսուցումը, որոնք սպասարկելու են «Դիոս-

կոլրի» եւ «Օչամչիր» անվանումները ստացած նավերը»,- ասաց Ռուդը: Նրա խոսքով, «Վրաստանը բարդ հարեւանություն ունի, իսկ բռնազավթված տարածքն առանձնահատուկ մարտահրավեր է անօրինական առևտուրը հսկելու առումով»: Նա խոստացել է, որ ԱՄՆ-ը կչարունակի Վրաստանի առափնյա պահպանության ծառայության ամրապնդման ուղղված ջանքերը: Իր խոսքում, Մանուկա Բախտաձեն անդրադարձավ նորանկախ Վրաստանին Ամերիկայի Միացյալ Նահանգների

կողմից ցուցաբերած օգնության հարցին, հայտարարելով, որ ԱՄՆ հնարավորինս օգնում է Վրաստանի պաշտպանունակության ամրապնդման հարցում: Վրաստանի վարչապետը ցուցաբերած աջակցության համար շնորհակալություն հայտնեց ԱՄՆ ղեկավարությանն ու ժողովրդին:



ՄԱՐԻԽՈՒՄԱՆ ԱՐՏԱՅԱՆԱՆ ՕՐԵՆՔԻ ՔՆԱՐԿՈՒՄԸ ՀԵՏԱԶԳՎՈՒՄ Է

Վրաստանի խորհրդարանը մարիխուանայի արտահանման մասին օրինագծի քննարկումը հետաձգել է 2 ամսով: Որոշումը կայացվել է առողջապահության հանձնաժողովի ներկայացրած դիմումի հիման վրա: Հիշեցնենք, կառավարության ներկայացրած նախագիծը նախատեսում է մարիխուանա անեցնել եւ այն բժշկական նպատակներով արտահանել:

Խորհրդարանի բյուրոյի որոշմամբ, եւս մեկ ամսով հետաձգվում է նաեւ այն օրենսդրական փաթեթի քննարկումը, ըստ որի, մարիխուանայի օգտագործման դեպքում խստանում է վարչական եւ քրեական պատասխանատվությունը:

ԿԵՆՍԱԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԸ ԿԱԶՄՈՒՄ Է 170 ԼԱՐԻ

Ինչպես տեղեկացրել է վիճակագրության ազգային ծառայությունը, ընթացիկ տարվա սեպտեմբերին աշխատունակ տղամարդու կենսական նվազագույնը կազմում է 170 լարի 20 թեթրի, այն, օգոստոսի համեմատ, նվազել է 1 լարի 20 թեթրով:

Նշենք, որ կենսական նվազագույնի ներկայիս ցուցանիշն ամենացածրն է՝ 2017 թվականի սեպտեմբերից հետո:

Վիճակագրության ծառայության տվյալներով, միջին ընտանիքի կենսական նվազագույնը կազմում է 285,4 լարի, մեկ հոգու համար՝ 150,7 լարի, երկու հոգուց կազմված ընտանիքի համար՝ 241,1 լարի, իսկ երեք հոգանոց ընտանիքի համար 271,3 լարի:

ՍՈՒՊԵՐՄԱՆԻՐՆԵՐ՝ ԲԵՆՁԱԼՏԱՆ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ

Նոյեմբերին ստուգումներ կանցկացվեն Վրաստանի մի քանի տասնյակ բենզալցակայաններում եւ գազալցակայաններում: Կստուգվի դրանց գործունեությունը, հատուկ ուշադրություն կդարձվի վառելիքի որակին:

Ստուգումները կընթանան առանց նախնական գզուշացման: Վառելիքի որակի հետ կապված խախտումները 8000 լարիի չափով կտուգանվեն:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՆՎԱԶԵԼ Է

2018 թվականի երկրորդ եռամսյակում Վրաստանում գործազրկության մակարդակը, նախորդ եռամսյակի համեմատ, նվազել է 1,9 տոկոսային կետով եւ կազմել 12,1%: Այդ մասին հայտարարեց Ազգային վիճակագրական ծառայության գործադիր տնօրեն Գոգիտա Թոդրաձեն:

Ըստ նրա, այս կրճատումը հիմնականում պայմանավորված է սեզոնային գործունեությունից եւ շինարարության ու գյուղատնտեսության ոլորտներում զբաղվածների թվի աճով: - Եռամսյակային տվյալ-

ները ցույց չեն տալիս տարիքային պրոֆիլը, սակայն, եթե մենք վերլուծենք տարեկան տվյալները, գործազրկության ցուցանիշը 15-24 տարիքային խմբում է, իսկ ինչ վերաբերում է 65 տարեկան եւ բարձր տարիքի բնակ-

չությանը, այս տարիքային խմբում այն շատ ավելի ցածր է, ինչը պայմանավորված է տարբեր գործունեությամբ:

Ինչ վերաբերում է մեթոդաբանությանը, գործազուրկ է այն մարդը, ով հարցման ընթացքում չի աշխատել եւ վերջին 30 օրվա ընթացքում աշխատանք է փնտրել եւ միեւնույն ժամանակ առաջիկա երկու շաբաթների ընթացքում պատրաստ է եղել աշխատել: - ասաց Գոգիտա Թոդրաձեն:

Գրուզստատի տվյալներով, 2018 թ.-ի երկրորդ եռամսյակում տնտեսապես ակտիվ բնակչությունը կազմել է աշխատունակ տարիքի բնակչության 64 տոկոսը (15 տարեկան եւ ավելի): Նախորդ եռամսյակի համեմատ, բնակչության զբաղվածության մակարդակը, որպես զբաղվածության մակարդակ, համապատասխանաբար, աճել է 0.2 եւ 1.4 տոկոսային կետով:

ՂԱՏԱԿԱՆ

ԲԱՑԱՐԱՅՏՎԵԼ Է ԲԱԴԻ ԴԱՏԱՐԿԱՑԻՇՎԻԼՈՒ ԴԵՄ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՓԱՍՏԸ

ՎԼԽԱՎՈՐ ԴԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի նախագահի նախկին թեկնածու, մեծահարուստ Բադրի Պատարկացիշվիլու սպանությունը նախապատրաստելու փաստը բացահայտված է: Այս մասին հայտարարություն է տարածել գլխավոր դատախազությունը:

«Վրաստանի դատախազությունը բացահայտել է Բադրի Պատարկացիշվիլու սպանությունը: Դատարանի որոշման հիման վրա, իշխանության չարաշահման եւ ծանրացուցիչ հանցանքներում սպանության նախապատրաստելու փաստով, ձերբակալվել են սահմանադրական անվտանգության բաժնի թեխնիկի գլխավոր վարչության երկրորդ բաժնի առաջին ծառայության նախկին ղեկավար Գ.Մ.-ը, երկ-

րորդ հիմնական ստորաբաժանման նախկին փոխտնօրեն Լ.Բ.-ը եւ նույն բաժնի երկրորդ ծառայության ղեկավար Ռ.Շ.-ը:

Հետաքննությունը բացահայտել է հանրությանը հայտնի այսպես կոչված «Գաղտնի կադրերի գրանցող անձանց» գործը: Մեղադրյալներից մեկի տանը, կատարված հետախուզության ժամանակ, հայտնաբերվել է Վրաստանի ներքին գործերի նախարարությանը պատկանող ծայ-

նագրող սարք, որի փորձաքննության արդյունքում պարզվել է, որ 2007 թվականի փետրվարի 4 եւ 5-ի ծայնագրություններն արվել են այդ սարքով:

Այս փուլում հետաքննությունը շարունակվում է, բացահայտվում են հանցագործության մեջ ներգրավված այլ անձինք»,- ասվում է դատախազության տարածած հաղորդագրության մեջ:

Հիշեցնենք, որ Լոնդոնում գտնվող 52-ամյա Բադրի Պատարկացիշվիլին 2008-ի փետրվարի 12-ին մահացել էր սրտի կաթվածից՝ ըստ պաշտոնական վարկածի:

ՅԵՅՈՆՆԱԳՅՈՒՆ ԵՎԱՄՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԲԱՑԱՐԱՅՏՎԵԼ Է ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱՆԱԽՏԱՆ 578 ԴԵՊԸ

Հոկտեմբերի 8-14-ը ներառյալ, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիտորինգի ղեկավարման կողմից, երկրի մասշտաբով անցկացված վերստուգիչ միջոցառումների արդյունքում, բացահայտվել է հարկային օրենսդրության խախտման 578 փաստ: Մասնավորապես, հարկային մոնիտորինգի ղեկավարման աշխատակիցների կողմից ստուգման է ենթարկվել 3843 հարկատու: Ստուգման արդյունքներում, վավերացվել են հետևյալ իրավախախտումները. առանց ապրանքագրերի ապրանքների տեղափոխման 111 փաստ, տնտեսական գործունեության համար հարկատուների կողմից Վրաստանի հարկային օրենսդրության խախտման 26 դեպք եւ կանխիկ գումարներով վաճառքի ժամանակ գանձարկային սարքի անտեսման 441 փաստ:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԶՂԱՅՏԱԳՐՎԱԾ ՍԻԳԱՐԵՏ

Հոկտեմբերի 12-ին, Կարմիր կամուրջ սահմանային անցումակետում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները կասկածի հիման վրա խուզարկել են Ադրբեջանի քաղաքացի Է.Մ.-ի ավտոմեքենան:

Խուզարկության արդյունքում, հայտնաբերվել է 960 չիպտագրված գլանակ: Գործող օրենսդրության համաձայն, իրավախախտումն թույլ տված անձի

ապրանքը, տրանսպորտային միջոցը բռնագրավվել է, սահմանվել է դրամական տուգանք՝ 1000 լարիի չափով:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎԱՄՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆԽՎԵԼ Է ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ԱՊՕՐԻՆԻ ՆԵՐԿՐՄԱՆ ՓՈՐՁԸ

Հոկտեմբերի 13-ին «Քութայիսի օդանավակայան» սահմանային անցումակետում կանխվել է երկրի տարածք թմրանյութի ապօրինի ներկրման երեք փորձ:

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա, խուզարկել են Վրաստանի եւ Հունաստանի քաղաքացիներ Ս.Վ.-ի, Ջ.Մ.-ի եւ Ջ.Տ.-ի ուղեբեռը: Խուզարկության արդյունքում, հայտնաբերվել է թմրանյութ պարունակող 54 հաբ: Գործի նյութերը, հետագա արձագանքման համար, փոխանցվել են ներքին գործերի նախարարության համապատասխան բաժնի:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ՝ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆ

ՍԱՆՈՍԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԻ. «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ ԻՆՉ ԶԱՄԱՐ ԽՈՐԹ Է»



Հոկտեմբերի 28-ին անցկացվելիք նախագահական ընտրությունների քարոզարշավի շրջանակներում, նախագահի անկախ թեկնածու Սալոմե Զուրաբիշվիլին, Դուշեթիում հանդիպում ունենալով ընտրողների հետ, հայտարարեց, որ ատելության լեզուն իր համար օտար է: «Դա կարող է տեղ գտնել միայն քաղաքական քննադատությունում, բնական է, տարակարծության համար նույնիսկ պարտադիր»,- ասաց նա:

Ատելության լեզուն ինձ համար օտար է, այս առումով ես իսկական վրացի եմ, քանի որ վրացական մշակույթը սկսվում է դաստիարակությամբ: Սա բոլորի, առաջին հերթին նախագահի պարտականությունն է, որպեսզի երիտասարդներին օրինակ ծառայի, թե ինչպես է պետք ջանք գործադրել երկրի հզորացման եւ միավորման համար,- հայտարարեց Զուրաբիշվիլին եւ հավելեց, որ ատելության լեզուն կխանգարի հասնել Վրաստանի տարածքային ամբողջականության ճանաչմանը:

առաջին փուլում 53 տոկոսով հաղթանակ է տանելու Սալոմե Զուրաբիշվիլին: Ինչպես հայտարարեց «Վրացական երազանք»-ի ղեկավարներից Մամուկա Մոխիարաձեն, իշխող կուսակցության ներքին հետազոտությունների արդյունքների համաձայն, 19 տոկոս ձայներով երկրորդ տեղում է ընդդիմադիր դաշինքի նախագահի թեկնածու Գրիգոր Վաշաձեն, երրորդ տեղում է «Եվրոպական Վրաստան»-ի նախագահի թեկնածու Դավիթ Բաքրաձեն՝ 17 տոկոսով:

«ՆԱԽԱԳԱՆ ԴԵՏԷ Է ԼԻՆԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՅՄԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ»

«Երկրի նախագահը պետք է լինի կայունության եւ հույսի երաշխավորը»,- այս մասին օտարերկրյա գործարարների եւ քաղաքական գործիչների հետ հանդիպմանը հայտարարել է «Եվրոպական Վրաստան»-ը ներկայացնող նախագահի թեկնածու Դավիթ Բաքրաձեն:

Նա նշեց, որ նախագահի կարևոր գործառնություններից մեկը պետք է լինի նաեւ օտարերկրյա ներդրողների հետ հարաբերություններ հաստատելը:

ներդրումներն ավելանան: Այս առումով կարևոր է քարոզարշավի ընթացքում հնարավորություն ունենալ հանդիպել օտարերկրյա ներդրողներին: Նրանք պետք է տեղեկանան, որ մեր երկիրը գնում է առաջ, կայուն է, եւ արժե այստեղ ներդրումներ կատարել,- հայտարարել է Բաքրաձեն:

ՀՐԱՏԱԿ ԹԵՄԱ

ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԸ՝ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՎՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, 2019 թվականից Վրաստանում ուժի մեջ է մտնում կուտակային կենսաթոշակային համակարգը, ըստ որի՝ գործատուները եւ աշխատողները պարտավոր են հատուկ հիմնադրամ մուծել աշխատավարձի 2 տոկոսը: Ընդ որում, սույն պարտավորությունը տարածվում է երկու կողմերի վրա, հետևաբար, սոցիալական հիմնադրամ փոխանցվելու է եկամտի 4 տոկոսը:



ճակում կհայտնվի նաեւ կենսաթոշակային հիմնադրամը,- հայտարարեց «Արդի» ընկերության գլխավոր տնօրենը:

Տվյալ պարագայում օրինաչափ հարց է ծագում, թե գործարար շրջանները, ինչ վերաբերում է «Արդի» ընկերության գլխավոր տնօրեն Քարթլոս Կորանաշվիլին, կենսաթոշակային հիմնադրամի փոխանցումները պարունակում են մեծ թվով հարցեր: Նրա կարծիքով, կառավարության կողմից հրապարակված հիմնական թեզերը վերջնականապես մշակված չեն եւ մակերեսային են:

քեր մուծումներ են կատարելու այդ հիմնադրամում: Սակայն շատ ավելի հետաքրքիր է, թե, ինչ ծրագրեր է կապում կառավարությունը կուտակային այդ հիմնադրամի հետ, ենթակառուցային ո՞ր նախագծերում հնարավոր կլինի ներդրել այդ գումարը, որքանով են այդ ներդրումները արդյունավետ եւ կապված ռիսկերի հետ: Հարցերն է՛լ ավելի են սրվում, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Վրաստանում բացակայում է կենսաթոշակային հիմնադրամների համար ներդրումային միջավայրը, քանի որ ֆինանսական շուկան չի գործում, արժեքավոր թղթերի շուկան գործնականում գոյություն չունի:

վասություններ է տալու մասնավոր հատվածին, սակայն ներկայիս կառավարությունը որոշել է ընթանալ սոցիալական ուղիով եւ ստանձնել է բոլոր պարտավորությունների կատարումը: «Այդ առումով բավական է մշել համընդհանուր առողջապահության պետական ծրագիրը, երբ այդ համակարգի կառավարումը վստահվել էր մասնավոր ապահովագրական ընկերություններին, ծրագրի արժեքը կազմում էր 200 միլիոն լարի: Սակայն հիմա, երբ այն գտնվում է պետության տնօրինության ներքո, հասել է 1 միլիարդ լարի: Եթե պետությունը իր դիրքորոշումը չփոխի, ապա, նույն վի-

հաշվիլու, կենսաթոշակային նոր համակարգը կհանգեցնի եկամտների ավելացման: «Հատկանշական է, որ նման պայմաններում եկամտների աճն անմիջականորեն կվավերացվի, թեպետ համակարգի արդյունավետությունը իրեն զգացնել կտա միայն տարիներ անց: Ուստի, կուտակային համակարգը դժվար է ընկալվում»,- ասաց նա եւ հավելեց, որ որոշ տարակուսանքներ են ծագել նաեւ այդ գումարների կառավարման հարցում: «Ով է ինչպես է կառավարելու այդ գումարները, որտեղ են ներդրվելու, որքան է կազմելու շահույթի տոկոսը, հնարավոր կլինի, արդյոք, դրանք ներդնել պետական բաժնետոմսերում կամ մասնավոր ընկերությունների բաժնետոմսերում: Եվ քանի որ Վրաստանում արժեքավոր թղթերի շուկա գոյություն չունի, ապա, հավանաբար, այն ստիպված կլինենք ներդնել արտասահմանում, թեպետ պարզ չէ, որտե՞ղ, ո՞վ է ինչպե՞ս»,- հայտարարեց Իրակլի Իաշվիլին:

ՄԻՄՆ ԿԻԼԱՇԵ

ԱՄԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԲԱՅՎԵՑ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հավասարության հարցերով պետնախարար Քեթեևան Ցիխելաշվիլին, արտաքին գործերի փոխնախարար Լաշա Գվասալիան, Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Բեսարիոն Ամիրանաշվիլին, Ախալքալաքիից եւ Նինոծմինդայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենգել Մկոյանը, այդ եր-

Ախալքալաքիի արդարադատության տունը Բորժոմիից եւ Ախալցխեից հետո թվով երրորդն է Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում, որտեղ տեղի բնակիչները նվազագույն ժամկետներում եւ հարմարավետ միջավայրում կարող են ստանալ պետական եւ մասնավոր հատվածի 400-ից ավելի սպասարկումներ:



կու մունիցիպալիտետների քաղաքապետեր Յուրի Ունանյանը եւ Անի Մոսոյանը, սակրեբուլոների նախագահներ Նաիրի Իրիցյանը եւ Սմբատ Կյուրեղյանը, Ծալկայի մունիցիպալիտետի քաղաքապետ Իլիա Սաբաձեն եւ սակրեբուլոյի նախագահ Իրակլի Գիգինեիշվիլին, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բաթբուրջյանը եւ ուրիշներ:

Արդարադատության տան հետ միասին Ախալքալաքիում բացվեց նաեւ ամուսնությունների տունը: Մինչ օրս Ախալքալաքիի մունիցիպալիտետում ամուսնության տոնական տարածք գոյություն չունեց: Զույգերը կարող էին միայն դիմել պետական սպասարկումների զարգացման գործակալության Ախալքալաքիի մասնաճյուղին, որտեղ ամուսնության գրանցումն իրականացվում էր առանց տոնական արարողության: Այսուհետեւ յուրաքանչյուր զույգ հնարավորություն ունի ամուսնությունը գրանցել տոնական արարողությամբ բարձր չափո-



րոշիչներին համապատասխան կահավորված Ախալքալաքիի ամուսնությունների տանը:

Ախալքալաքիի արդարադատության տունը զբաղեցնում է 602 քառակուսի մետր եւ գտնվում է քաղաքի Ազատության փողոցի վրա: Շինարարությունն իրականացվեց ճարտարապետ Միխեիլ Գիորգբիանու նախագծով:

Ախալքալաքիի արդարադատության տան բացման պաշտոնական արարողության ավարտին, անցկացվեց համերգ:

Ախալքալաքիի արդարադատության տունը վերջին տարիներին կառուցած 8-րդ մասնաճյուղն է: Սկսած 2013 թվականից մինչ օրս արդարադատության տներ են բացվել Զուգդիդիում, Փոթիում, Թիանեթիում, Դագրեգիում, Բորժոմիում, Լազոդիսիում եւ Օնիում: Մոտ ժամանակներում արդարադատության տներ կբացվեն Խոնիում, Մարտվիլիում, Սենակիում եւ Բուլնիսիում: